զարտաքին երկաթեայ դուռն , զայն ևս աղխէին յետուստ ,
որով խափանէր ճանապարհ Հայոց յԱյրն ․ Դատաւորն կա-
մէր տալ զմի բանալի նորին , այլ Յոյնք խոստացան Թո-
ղուլ զայն բաց , ընդ այս Թէ և հաճեցան Դատաւորք , այլ
Հայք ստիպէին իսպառ բառնալ զկուպն , ընդդէմ կացին
Յոյնք ․ այլ 'ի պնդելն Հայոց , հրամայեաց Դատաւորն և
քակեցին զայն , եւ մնաց այնպէս ․ խնդրեցին Հայք զբա-
նալի արտաքին երկաթեայ դրան , և բաժանորդութեամբ
աւել ածել 'ի սիւնազարդ գաւթին ․ սակայն 'ի զօրանալ
աղաղակին Յունաց , եԹող զայնս դատաւորն ։ Եւ ապա
մտին ամենեքեան 'ի հիւսիսային կողմն եկեղեցւոյն , ուր
էին խորանք երկու , եհարց դատաւորն , որո՞ն են խորանքս
այսոքիկ , յառաջեցին Յոյնք և ասեն ․ մին Ղպտոց և միւսն
Ասորւոց , բայց Հայք երկիցս 'ի տարւոջ եկեալ կատարեն
աստ զօրէնս իւրեանց ։ Եհարց դատաւորն ցլատինս և նո-
քա ասեն՝ Թէ երկոքին սեղանքն եւս Հայոց են ։ Ասէ՝ Դա-
տաւորն ․ խորանքս Հայոց են , զի Ղպտիք և Ասորիք հե-
տեւող են Հայոց , և ոչ եԹէ Հայք նոցա , ուրեմն բարձ-
ցեն Յոյնք զպատկերս և դիցեն Հայք և կատարեսցեն զօ-
րէնս իւրեանց ։ Այլ Հայք ասէին , ոչ միայն զպատկերս
խորանացն բառնալ , այլ և զորմոցն , զի սկսեալ 'ի հիւսի-
սային դրանէ մինչ ցդուռն Այրին լցեալ էին պատկերօք ։
Առ այս բազմացան աղաղակք Յունաց և Աւետիս Թարգ-
մանն առաւել եւս բարձրացոյց զձայն իւր , ոչ միայն զպատ-
կերս , այլ և զկանԹեղս , և միանգամայն ամփոփել զձեռս
իւրեանց 'ի տեղւոջէս յայսմանէ , ապա Թէ ոչ չմերձենամք
'ի խորանսն և ծանուցանեմք Արքայի ․ բաւական լիցի զոր
կրեցաք 'ի սոցանէ մինչեւ ցայժմ իբրեւ գերի ․ Դատա-
ւորն , ընդէ՞ր աղաղակէք , այսուհետեւ չունիք խնդրել
Թուղթս 'ի Յունաց , այլ միշտ համարձակ կատարել զօրէնս
ձեր ։ Քաղաքապետն որ միշտ 'ի կողմն Յունաց էր , ասէ ,
իսկզբանէ անտի վշտացեալ է սիրտ Հայոց , զի յայրման
և 'ի շինութեան տաճարին Յոյնք տիրաբար խրոխտային
'ի վերայ Հայոց , այժմ եհաս սոցա կարգ եւ ժամանակ ։
Նուրի էֆէնտի ասէ ցԹարգմանն , հազիւ զերծաք 'ի մա-
լեգին աղաղակէ Մուսաննըֆ Դատաւորին , այժմ դո՞ւ ըս-
կըսար , Թէպէտ առանձին քաջալերէր չԹուլանալ ․ Դատա-